

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության Քրեակատարողական օրենսգրքի փոփոխվող հոդվածների

(...)

Հոդված 52. Ղատապարտյալների նկատմամբ կիրառվող տույժի միջոցները

1. Կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով սահմանված պատժի կրման կարգը և պայմանները խախտելու համար ղատապարտյալի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) կարգապահական կալանք՝ մինչև տասնհինգ օր ժամկետով:

2. Կարգապահական կալանքը ղատապարտյալը կրում է կարգապահական գումարտակի պատժախցում:

3. Կարգապահական կալանք կրելու ժամանակամիջոցում ղատապարտյալին կարող են արգելվել՝

1) դրամական փոխանցումներ ստանալը և կատարելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի.

2) հանձնուրներ, ծանրոցներ ու փաթեթներ ստանալը և ուղարկելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի.

3) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը.

4) տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

5) հեռախոսակապից օգտվելը:

~~Կարգապահական կալանք կրելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուրներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:~~

3.1 Կարգապահական կալանք կրելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում է աշխատելը:

3.2 Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները կիրառվում են տույժի միջոց կիրառելու մասին կարգապահական գումարտակի հրամանատարի կամ նրա պարտականությունները կատարող անձի պատճառաբանված որոշմամբ: Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում կարող է կիրառվել սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված մեկից ավելի սահմանափակում:

3.3 Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր սահմանափակումը կիրառելիս պետք է հիմնավորվի պատճառական կապը կատարած խախտման և կիրառվող սահմանափակման միջև:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժի միջոցները կիրառվում են ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

5. Սույն հոդվածում սահմանված տույժի միջոցներից բացի, կարող են կիրառվել զինվորական կանոնադրքերով սահմանված տույժի այլ միջոցներ:

(52-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-120-Ն, փոփ. 08.04.08 ՀՕ-15-Ն)

Հոդված 59. Ղատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները

1. Ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար ղատապարտյալի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

- 1) նկատողություն.
- 2) տեղափոխում պատժախուց՝ մինչև տասն օր ժամկետով:

2. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին կարող են արգելվել դրամական փոխանցումներ ստանալը և կատարելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի:

~~2. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը:~~

2.1. Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում է աշխատելը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժի միջոցները կիրառվում են ներքին կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով:

Հոդված 96.

Ազատագրված ղատապարտված անձի կողմից պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումները

1. Ազատագրված ղատապարտված անձի կողմից պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումներ են համարվում զանցանքը, ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, անհնազանդությունը կամ անհարգալից վերաբերմունքը կամ այլ խմբային անհնազանդություններ կազմակերպելը կամ դրանց ակտիվորեն մասնակցելը, նշված խախտումները կատարելու նպատակով խմբեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում պատժի կրման սահմանված կարգի երկու կամ ավելի խախտումները, եթե դրանցից յուրաքանչյուրի համար ղատապարտյալը ենթարկվել է տույժի և տույժի միջոցը չի մարվել:

2. Պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտման դեպքում ղատապարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման մեկուսացվածության առավել բարձր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

Հոդված 97. Ազատագրված ղատապարտված անձի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելու կարգը

1. ղատապարտյալի նկատմամբ տույժի միջոցները կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, տույժի միջոցի կիրառմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու ողջամիտ անհրաժեշտությունը, ղատապարտյալի անձը և նրա վարքագիծը՝ նախքան խախտումը կատարելը: Կիրառվող տույժը պետք է համապատասխանի կատարած խախտման ծանրությանը և բնույթին: Տույժը կիրառվում է բացառապես խախտումը կատարած անձի նկատմամբ այն հայտնաբերելուց հետո ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, և, որպես կանոն, կատարվում է անհապաղ: Մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ:

2. Տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի պատճառաբանված որոշմամբ:

3. ղատապարտյալը տեղափոխվում է պատժախուց պարտադիր նշելով այդ վայրում պահելու ժամկետը:

4. Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախածննդյան կամ հետծննդյան ժամանակահատվածում գտնվող ղատապարտյալը պատժախուց չի տեղափոխվում:

5. Պատժախուց բուժական ուղղիչ հիմնարկ փոխադրելու դեպքում բուժական ուղղիչ հիմնարկում ղատապարտյալին պահելու ժամանակը հաշվվում է տույժը կրելու ժամանակի մեջ:

6. ղատապարտյալը համարվում է տույժ չունեցող, եթե տույժը կրելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, չի ենթարկվել նոր տույժի, կամ նախկինում նշանակված տույժը հանվել է:

7. ղատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել պատիժները կատարելու նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Հոդված 98. ղատապարտյալին պատժախուցում պահելու պայմանները

~~1. Պատժախուցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուրքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:~~

1. Պատժախուցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին կարող են արգելվել՝

1) դրամական փոխանցումներ ստանալը և կատարելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի,

2) հանձնուրքներ, ծանրոցներ ու փաթեթներ ստանալը և ուղարկելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի,

3) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը,

4) տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

5) հեռախոսակապից օգտվելը:

2. Որպես տույժ՝ պատժախուց տեղափոխված ղատապարտյալն իրավունք ունի՝

1) սննդամբերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր անձնական հաշվից ամսական ծախսելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով գումար:

2) օգտվելու մեկ ժամ տևողությամբ ամենօրյա գրոսանքից:

2.1. Պատժախուցում գտնվելու ժամանակամիջոցում ղատապարտյալին արգելվում է աշխատելը:

2.2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները կիրառվում են տույժի միջոց կիրառելու մասին ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի պատճառաբանված որոշմամբ: Պատժախուցում գտնվելու ժամանակամիջոցում կարող է կիրառվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկից ավելի սահմանափակում:

2.3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված յուրաքանչյուր սահմանափակումը կիրառելիս պետք է հիմնավորվի պատճառական կապը կատարած խախտման և կիրառվող սահմանափակման միջև:

3. Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

4. Պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության ներքո:

5. Պատժախցում պահվող դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է վաղաժամկետ դադարեցվել բժշկի եզրակացության հիման վրա:

(98-րդ հոդվածը փոփ. 08.04.08 ՀՕ-15-Ն)